



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիդյան

« 27 » 03 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 030 - 24

Ձեռնարկողը՝

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ  
Երևան, Ադոնցի փ. 21/3

Գործունեությունը՝

Արտաշատի ավազակոպճային խառնուրդի  
հանքավայրի արդյունահանման աշխատանքների  
շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվեկտրություն  
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 7 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 030 - 24

«27» Տարբեր 2024թ.

Արարատի մարզի Արտաշատի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արարատի մարզ,  
Արտաշատ բնակավայր

**Ներածական մաս.** Արարատի մարզի Արտաշատի ավազակոպճային խառնուրդի հանքավայրը գտնվում է Արարատի մարզի Արտաշատ բնակավայրի վարչական տարածքում՝ Արտաշատ քաղաքից 5.0 կմ հարավ-արևմուտք, Արաքս գետի ձախ ափին, ՀՀ Պետական սահմանի եզրին և զբաղեցնում է 2.0 հա տարածք:

Արաքս գետը հոսում է Արտաշատի հանքավայրի հաշվարկային բլոկներից 66-ից 405մ հեռավորության վրա:

Հանքավայրի համար հայցվող տարածքը ներկայացված է Արտաշատի համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի 2004 թվականի օգոստոսի 16-ի թիվ 33 որոշմամբ, 2003 թվականի հունիսի 27-ի տոպոգրաֆիական հանույթով ֆիքսված սահմաններում՝ C<sub>1</sub> կարգով 73.1հազ.մ<sup>3</sup> քանակով: Գնահատված պաշարները դասվել են



վերականգնվող պաշարների շարքին (2 միավոր վերականգնման գործակցով) C<sub>1</sub> կարգով: Հաստատված պաշարները հաշվառվել են որպես ավագ՝ շինարարական աշխատանքների համար (ՀՍՏ ԳՈՍՏ 8736-95) և խիտ լեռնային ապարներից (ՀՍՏ ԳՈՍՏ 8267-95) խճի և կոպճի արտադրության համար:

Ըստ ՀՍՏ ԳՈՍՏ 8736-95 «Ավագ շինարարական աշխատանքների համար»՝ ավազները պատկանում են I դասին: Արդյունահանումն իրականացվելու է 3 բլոկներով՝ ընդհանուր 1.973հա մակերեսով տարածքում:

Օգտակար հանածոյի մարվող պաշարները կազմում են 1670.190 հազ.մ<sup>3</sup> C<sub>1</sub> կարգով:

Ավազակոպճային զանգվածի արտադրողականությունը/կորզվող պաշար/ կազմում է տարեկան 83170 մ<sup>3</sup>:

Պաշարների վերականգնման գործակիցն ընդունված է 2 միավոր:

Աշխատանքային օրերի քանակը ընդունվել է՝ 195 օր:

Շահագործման ժամկետը՝ 20 տարի:

Մակաբացման ապարները բացահանքում բացակայում են, այդ պատճառով լցակուտային տնտեսություն չի ձևավորվում:

ԱԿԽ-ի հանքավայրը գետաողողատային տիպի հանքավայր է և ներկայացված է ավազակոպճային ապարների ժամանակակից հունային նստվածքներով:

Հանքավայրում ավազաշերտը պարզագույն երկրաբանական կառուցվածքով գետահունային այլուվիալ բնույթի առաջացում է: Շերտի երկարությունն ընդհատումներով կազմում է 1550 մ: Ըստ տարածման, շերտը կազմված է երեք ոսպնյակաձև ավազակուտակներից: Առաջին կուտակը գտնվում է հանքավայրի հյուսիս-արևմտյան թևում և ձգվում է 320 մ: Ըստ հետախուզական փորվածքների տվյալների՝ կուտակի հզորությունը կազմում է 0.2-4.5մ: Լայնությունը կենտրոնական մասում ձգտում է մինչև 30մ, իսկ դեպի արևմուտք՝ 0-ի: Երկրորդ ավազակուտակը գտնվում է հանքավայրի կենտրոնական մասում և ունի 600մ երկարություն: Կուտակի առավելագույն լայնությունը 30մ է, հզորությունը՝ 0.2-2.8 մ: Երրորդ ավազակուտակը գտնվում է հանքավայրի հարավ-արևելյան թևում ունի լայնական տարածում 200 մ ձգվածություն: Ավազակուտակի լայնությունը հասնում է մինչև 40 մ, հզորությունը՝ 1.7-4.5 մ: Ավազակոպճային խառնուրդի արդյունահանման աշխատանքները նախատեսված է կատարել դեպի ներքև շերտի մասն եղանակով՝ 2.15 մ<sup>3</sup> շերտի տարողությամբ հակառակ բահով սարքավորված – CAT 336-07GC էքսկավատորով: Նախ կատարվելու է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին (առաստաղին)՝ օգտակար հանածոյի ջրազրկման նպատակով, որից հետո իրականացվելու է ջրազրկված օգտակար հանածոյի կույտի բարձումը տրանսպորտային միջոցների մեջ:

Արդյունահանված ավազակոպճային զանգվածը նախատեսվում է տեղափոխել ավտոինքնաթափով, 7.0կմ հեռավորության վրա գոյություն ունեցող ՋՏԿ:

Տեղամասի անկյունային կետերի կոորդինատներն են ARM WGS-84 համակարգով:

1- C<sub>1</sub> բլոկի կոորդինատները ARM WGS-84 համակարգով՝

- |                   |                |
|-------------------|----------------|
| 1. Y=8458576.6315 | X=4422057.9813 |
| 2. Y=8458571.1154 | X=4422091.4211 |
| 3. Y=8458580.8006 | X=4422090.2483 |
| 4. Y=8458622.0431 | X=4422081.8560 |
| 5. Y=8458643.0183 | X=4422070.6129 |
| 6. Y=8458661.2008 | X=4422057.3536 |



- 7. Y=8458737.4858 X=4421983.6261
- 8. Y=8458782.8073 X=4421954.5621
- 9. Y=8458796.2281 X=4421934.9378
- 10. Y=8458803.4409 X=4421905.7065
- 11. Y=8458763.4772 X=4421924.6746
- 12. Y=8458672.5969 Y=4422014.2741
- 13. Y=8458594.2375 X=4422055.3290
- 14. Y=8458583.9290 X=4422056.5614

2-С<sub>1</sub> բլոկի կոորդինատները ARM WGS-84 համակարգով՝

- 1. Y=8459223.6373 X=4421479.0289
- 2. Y=8459245.5484 X=4421481.8226
- 3. Y=8459310.0000 X=4421412.0000
- 4. Y=8459361.1376 X=4421350.1974
- 5. Y=8459383.4237 X=4421257.5360
- 6. Y=8459367.2753 X=4421271.3286
- 7. Y=8459355.5881 X=4421286.5462
- 8 Y=8459337.0037 X=4421330.4716
- 9. Y=8459320.8657 X=4421360.7883
- 10. Y=8459303.0889 X=4421386.6724
- 11. Y=8459271.2449 X=4421417.9461
- 12. Y=8459247.9498 X=4421450.7064

3 - С<sub>1</sub> բլոկի կոորդինատները ARM WGS-84 համակարգով՝

- 1. Y=8459413.8496 X=4421224.5812
- 2. Y=8459445.5164 X=4421185.5365
- 3. Y=8459468.7018 X=4421172.5212
- 4. Y=8459516.1592 X=4421173.7822
- 5. Y=8459549.3080 X=4421171.0688
- 6. Y=8459558.9860 X=4421168.5319
- 7. Y=8459583.2167 X=4421160.7990
- 8. Y=8459622.0000 X=4421162.0000
- 9. Y=8459644.3622 X=4421170.7598
- 10. Y=8459633.8471 X=4421156.7297
- 11. Y=8459623.8183 X=4421147.6193
- 12. Y=8459608.6231 X=4421140.9383
- 13. Y=8459591.5437 X=4421137.0512
- 14. Y=8459548.9740 X=4421133.9968
- 15. Y=8459504.0822 X=4421140.9748
- 16. Y=8459476.3482 X=4421140.9748
- 17. Y=8459451.8481 X=4421146.9304
- 18. Y=8459433.6722 X=4421157.8906
- 19. Y=8459422.7040 X=4421181.3767



Բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

1- C1 բլոկում բացահանքի պարամետրերն են՝

ամենամեծ երկարությունը – 308 մ

ամենամեծ լայնությունը – 31 մ

ամենամեծ խորությունը – 2.51 մ

օտարման տարածքը – 7576.6 մ<sup>2</sup>

2- C1 բլոկում բացահանքի պարամետրերն են՝

ամենամեծ երկարությունը – 290 մ

ամենամեծ լայնությունը – 25 մ

ամենամեծ խորությունը – 2.78 մ

օտարման տարածքը – 5597.7 մ<sup>2</sup>

3- C1 բլոկում բացահանքի պարամետրերն են՝

ամենամեծ երկարությունը – 285 մ

ամենամեծ լայնությունը – 37 մ

ամենամեծ խորությունը – 2.84 մ

օտարման տարածքը – 6560 մ<sup>2</sup>

Հանքավայրի շահագործման ժամանակ ընդունված է ընդլայնական ընթացքաշերտերով միակողմանի մշակման համակարգ:

Քանի որ գարնանային վարարաջրերի ժամանակ հնարավոր է առաջանան էկոլոգիական վնասներ, ապա ամեն տարի սեզոնի սկզբում, արդյունահանման աշխատանքներն սկսելուց առաջ անհրաժեշտ է գետահունների մաքրում բերվածքներից:

Լեռնային աշխատանքների կազմակերպման և ԱԿԽ արդյունահանումն իրագործելու համար անհրաժեշտ է իրականացնել մոտեցող բնահողային ավտոճանապարհի կարգաբերում: Ավտոճանապարհի երկարությունը՝ միջինը 497 մ, ամենամեծ թեքությունը՝ 0%, լայնությունը՝ 8մ: Կատարվող հողային աշխատանքները՝ 600մ<sup>3</sup>:

Դրենաժային (ցամաքեցման) առվի կառուցում բացահանքի հարավ արևելյան մասից 60 մ երկարությամբ և 5% թեքությամբ – 580 մ<sup>3</sup>: Արդյունաբերական հրապարակի կարգաբերում:

Արաքսավանի ԱԿԽ հանքավայրի շահագործման ընթացքում մակաբացման ապարներով ներկայացված ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանալու, քանի օգտակար հաստվածքը ծածկող առաջացումներ հանքավայրի տարածքում չկան:

Բացահանքում խմելու ջրով բանվորներին ապահովում են անհատական տափաշներով: Տեխնիկական ջուր պահանջվում է բացահանքի սահմաններից դուրս ավտոճանապարհների ջրման համար: Ավտոճանապարհների ջրումը կատարվում է ջրցան լվացող ավտոմեքենայով: Փոշենստեցման մակերեսները կազմում են բացահանքում ավտոճանապարհների վրա միջինը՝ 3980 մ<sup>2</sup>: Կենցաղային կեղտաջրերը՝ օրական 0.21 մ<sup>3</sup> ծավալով, լցվում են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվում են մոտակա մաքրման կայան:

Հանքավայրի տարածքում չկան խախտված/վերականգնված հողատարածքներ, պահեստավորված, կուտակված, պահպանվող հողաբուսական շերտ չկա:

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ հայցվող տարածքում կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չկան:

Հայցվող տարածքում բնության և պատմության, մշակույթի հուշարձանները բացակայում են:



**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

-Նավթամթերքները պահեստավորվելու և պահվելու են արտադրական հրապարակում, հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվելու է համապատասխան թեքություն, և ապահովվելու է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը: Կուտակված թափոնները պարբերաբար տեղափոխվելու են վերամշակում իրականացնող կազմակերպությունների տարածք:

-Կենցաղային աղբը՝ տարեկան մոտ 12տ ծավալով, հավաքվելու է հատուկ անթափանց տարողությունների մեջ և տեղափոխվելու է մոտակա կազմակերպված աղբավայր համապատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա:

-Նախատեսվում է փոշենստեցման նպատակով հանքավայրին մոտեցող ճանապարհի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:

-Կեղտաջրերի հավաքում բետոնապատ հորատից զուգարանում, որը պարբերաբար դատարկվում է հատուկ ծառայության ուժերով: Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով, տարածքը կհարթեցվի:

-Բացահանքի շահագործման ավարտից հետո նախատեսվում է խախտված տարածքների ռեկուլտիվացիա: Հարթեցումը կկատարվի բացահանքերի միայն մոտեցող ավտոճանապարհների 4050 մ<sup>2</sup>, արդյունաբերական հրապարակների 200 մ<sup>2</sup> և աշխատանքային հրապարակների խախտված 1480 մ<sup>2</sup> մակերեսներում: Միասին կկազմի՝ 5730 մ<sup>2</sup>: Հարթեցումը կկատարվի բուլդոզերի օգնությամբ: Բացահանքի տարածքները վերականգնվելու են տարեկան ցիկլում Արաքս գետի վարարման հաշվին:

Բացի լեռնատեխնիկական վերականգնման աշխատանքներից նախատեսվում է իրականացնել կենսաբանական ռեկուլտիվացիա, երբ հարթեցված և փխրեցված 0.57 հա տարածքում կատարվելու է պարարտացում և հիդրոֆիտ բազմամյա բույսերի սերմերի և սածիլների տունկ:

Այս նպատակով արտադրական և աշխատանքային հրապարակների և ճանապարհի հարթեցված, փխրեցված տարածքները պարարտացվելու են, կատարվելու է կաթնբեկի, սպիտակ թելուկի, սիզախոտի, շյուղախոտի և դաշտավլուկի սերմերի ցանք: Այդ աշխատանքների կատարման նպատակով նախատեսվում է տրամադրել 57.3 հազ. ՀՀ դրամ: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընդհանուր արժեքը կկազմի 863.9հազ. ՀՀ դրամ:

-Արտադրական տարածքի կանաչապատում, որի ընթացքում օգտագործվելու է ջրհեռացման առվի հատակում կուտակված և ավազի լվացումից առաջացած օրգանական հումքով հարուստ տիղմը:

-Աշխատակիցների հրահանգավորում, ծանոթություն անվտանգության տեխնիկայի կանոններին:

Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:



Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով արտադրական հանքավայրի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

Արաքս գետի ջրերի նմուշարկում աշխատանքների ընթացքում յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ պղտորության ուսումնասիրության նպատակով:

Աղմուկի վերահսկողություն տարեկան մեկ անգամ:

Կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն տարեկան մեկ անգամ:

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան մասնահանելու է 650.0հազ. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով, Արտաշատի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Արարատի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

### **Փորձաքննական պահանջներ**

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

-Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

- Անհրաժեշտ է ապահովել հաշվետվությունում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:

-ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ



հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

-Անհրաժեշտ է բացառել գետից արդյունահանումը, արդյունահանումն իրականացնել պահպանելով նախագծով նախատեսված՝ գետից առնվազն 60մ հեռավորությունը:

Արդյունահանման աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել հանքային իրավունք ունեցող կազմակերպությունների միջոցներով Արաքս գետի քայքայված ինժեներական կառուցվածքների վերականգնման առաջնահերթությամբ պայմանավորված՝ գետավազի արդյունահանման հետ կապված խնդիրները կանոնակարգելու մասին 2011 թվականի մարտի 24-ի N352-ն որոշման պահանջներով:

Հայաստանի Հանրապետության տարածքում Արաքս գետից գետավազի արդյունահանման կարգը հաստատելու մասին 2008 թվականի հունվարի 10-ի N18-Ն որոշման պահանջներով:

Ըստ անհրաժեշտության կառուցել ավապաշտպան հենապատ, համաձայնեցնելով համապատասխան պետական մարմինների և կառույցների հետ:

## ԵՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Արտաշատի ավազակոպձային խառնուրդի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան

